

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03 հուլիսի 2012թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում 2012թ. 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների և խնդիրների մասին
/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/
2. Համայնքային ծառայության ոլորտում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին
/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան/
3. 2012թ. 1-ին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկումների և դրանց լուծման ընթացքի մասին
/Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս. Սահակյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում 2012թ. 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Համայնքային ծառայության ոլորտում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:


Օրակարգի երրորդ՝ «2012թ. 1-ին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկումների և դրանց լուծման ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Սիլվա Սահակյանը:

/Կցվում են զեկուցումները և ելույթները/:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար Վարդան Գևորգյանը, Սյունիք համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55